ՀԵՏԱՔՐՔՐՎԱԾՈՒԹՅԱՆ ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՀՐԱՎԵՐ

(ԽՈՐՀՐԴԱՏՎԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ – ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆ)

Հայաստանի Հանրապետություն

Հայաստանի Սոցիալական Նեդրումների Հիմնադրամ

Ծրագրի անվանումը: Հայաստանի Սոցիալական Նեդրումների Հիմնադրամ - 3 Ազդեցության գնահատում

Փաթեթի համարը (համաձայն գնումների պլանի)՝ IA-001

Վարկի համարը՝ IDA -50710-AM AF3

Հայաստանի սոցիալական նեդրումների հիմնադրամ (ՀՍՆՀ) III Ծրագրի ֆինանսավորման նպատակով Հայաստանի Հանրապետությունը Միջազգային Զարգացման Ընկերակցությունից ստացել է վարկ և նախատեսում է օգտագործել այդ միջոցների մի մասը Խորհրդատվական Ծառայությունների՝ Հայաստանի Սոցիալական Նեդրումների Հիմնադրամ 3-ի Ազդեցության գնահատման ուսումնասիրության վավերացված վճարումները կատարելու համար:

Առաջադրանքի նպատակը.

Շահառուների վրա ՀՍՆՀ 3 ծրագրի գործունեության ազդեցության գնահատումն է:

Խորհրդատուն պետք է.

1 ***<u>Ենթակառուցվածքների վերականգնման բաղադրիչի շրջանակներում</u>***

- գնահատի մարդկանց ընկալումները ՀՍՆՀ-ի ծրագրերի կարևորության աստիճանի վերաբերյալ,
- որոշի շահառուների բավարարվածության մակարդակը ծրագրերի առնչությամբ,
- որոշի նրանց իրազեկության աստիճանը ՀՍՆՀ-ի առկայության, բնույթի և հիմնադրամի հետ առնչվելու ուղիների վերաբերյալ,
- գնահատի համայնքի անդամների մասնակցության և մոբիլիզացվելու աստիճանը ծրագրի ամբողջ ցիկլի ընթացքում (ներառյալ կանանց և երիտասարդներին),
- գնահատի շահառուների ընկալումները ծրագրի հիմնական մասնակիցների վերաբերյալ (ծրագրի իրականացնող գործակալություն, տեղական իշխանություն, համայնքային կազմակերպություններ, ՀՍՆՀ),

- գնահատի Ծրագրի ազդեցությունը այսպես կոչված՝ սոցիալական կապիտալի, համայնքի զարգացման և վերականգնված ենթակառուցվածքից օգտվող անմիջական շահառուների վրա,
- գնահատի Ծրագրի օգուտների կենսունակությունը (օրինակ՝ վերականգնված ենթակառուցվածքի համապատասխան շահագործումը և պահպանումը), այդ թվում ՀՍՆՀ-ի 1-ին և 2-րդ փուլերում իրականացրած ծրագրերի մասով,
- գնահատի ծրագրի իրականացումից հետո վերականգնված ենթակառուցվածքի օգտագործման աստիճանը,
- գնահատի ՀՍՆՀ-ի կողմից ծրագրերի իրականացմանն ուղղված աշխատանքների կատարումը,
- գնահատի ՀՍՆՀ-ի ծրագրերի անուղղակի ազդեցությունը հարակից համայնքների վրա,
- պարզել շահառուների կարծիքը ՀՍՆՀ-ի գործունեության բարելավման ուղիների մասին,
- գնահատի 2010թ. անցկացված ԱԳ հետազոտության հանձնարարականների կատարման աստիճանը,
- գնահատի ծրագրերի իրականացման հետ կապված աշխատատեղերի առաջացման ազդեցությունը շահառուների վրա՝ ըստ նրանց ընկալման (տարբերակված ըստ սեռերի):

2 <u>Ուսուցման բաղադրիչի շրջանակներում</u>

- որոշի շահառուների բավարավածության աստիճանը ՀՍՆՀ-ի Մունիցիպալ ֆինանսական կառավարման ուսուցման դասընթացներով,
- գնահատի ուսուցման ազդեցությունը տեղական իշխանության ֆինանսական կառավարման մասնագետների գործունեության վրա, ընդգրկելով դասընթացների ազդեցությունը ծրագրերի կենսունակության վրա, ինչպես նաև մասնակիցների կողմից ուսուցման արդյունքում ձեռքբերած հմտությունների և գործարարական պրակտիկայի գործնական կիրառման առումով,
- պարզի շահառուների կարծիքը ուսուցողական դասընթացների բարելավման ուղիների մասին, ներառյալ այն պոտենցիալ ոլորտները, որոնք չեն ընդգրկվել ուսուցման դասացանկում, սակայն մասնակիցների կարծիքով կարող էին օգտակար լինել:

Առաջադրանքի տևողությունը 91 օր է:

Շահագրգիռ խորհրդատուները պետք է ներկայացնեն հետաքրքրվածության նամակ և տեղեկություններ, որոնք ցույց կտան, որ իրենք ունեն պահանջվող որակավորում և համապատասխան փորձ վերոհիշյալ ծառայությունները կատարելու համար:

Ընտրության չափանիշներն են.

- Խորհրդատուի ընդհանուր փորձառությունը սոցիոլոգիական տարաբնույթ հետազոտությունների բնագավառում,
- Քանակական և որակական հետազոտությունների նախագծման և իրականացման փորձառություն,
- գնահատման հետազոտությունների պլանավորման, տվյալների հավաքման, վերլուծությունների կատարման և հաշվետվությունների կազմման փորձառություն,
- Հայաստանի հեռավոր շրջաններում աշխատելու փորձառություն:

Շահագրգիռ խորհրդատուների ուշադրությունը հրավիրում ենք Համաշխարհային բանկի ուղեցույցների՝ 'Համաշխարհային բանկի փոխառուների կողմից ՎԶՄԲ-ի փոխառությունների և ՄԶԸ-ի վարկերի և դրամաշնորհների շրջանակներում խորհրդատուների ընտրություն և վարձում, հունվար 2011' ('Խորհրդատուների Ուղեցույցներ' (Guidelines: Selection and Employment of Consultants under IBRD Loans and IDA Credits & Grants by World Bank Borrowers, January 2011)), 1.9 կետի վրա, որով սահմանվում է Համաշխարհային բանկի քաղաքականությունը շահերի բախման վերաբերյալ:

Խորհրդատուի ընտրությունը կիրականացվի Համաշխարհային Բանկի ուղեցույցի (Selection and Employment of Consultants under IBRD Loans and IDA Credits & Grants by World Bank Borrowers (January,2011) 3.7 կետում սահմանված 'Կազմակերպության որակավորման վրա հիմնված ընտրություն' ընթացակարգին համաձայն:

Շահագրգիռ հայտատուները լրացուցիչ տեղեկություններ կարող են ստանալ ՀՍՆՀ գրասենյակից Կ. Ուլնեցու 31, 4-րդ հարկ 409 սենյակ, Ձեռքբերումների բաժին, աշխատանքային օրերին ժ. 10:00-ից մինչև ժ. 17:00-ը:

Հետաքրքրվածության հայտերը պետք է ներկայացվեն առձեռն կամ էլ-փոստով՝ ստորև ներկայացվող հասցեով, ոչ ուշ քան 2014 թ. սեպտեմբերի 5-ը, ժամը 17:00-ը:

Հայաստանի Սոցիալական Ներդրումների Հիմնադրամ

Ձեռքբերումների բաժին

Կ. Ուլնեցու 31, 4-րդ հարկ 409 սենյակ

Էլ-փոստ՝ asif@armeniasif.am

Հեռ: (+374-10) 24 71 42